





զուգադրել է Երանոսի «Adversus Haereses» գրուածքի երկու հատուածի հետ. այսպիսի զուգադրումներ կարող են հեշտութեամբ սրբալեզրակացութեան յանգեցնել:

Էջերուկը Փրանսերէնի է Թարգմանել Հիպոդիտոսի երեք հատուածները. այս Թարգմանութիւնից փոխադրում ենք հայերէնի.

«Պէտք է ուրեմն համաձայնել նրանց հետ, որոնց հոգու մէջ ներթափանցել է դեւերի խաւարին առատ ոգին, (նրանց) որոնք երեւակայում են աստուածների առատ սերունդ եւ անթուարկելի մի էութիւն, ըստ Եսիողոսի Աստուածածնութեան եւ ըստ Հովնատի զրաբանութիւնների. եթէ (նոյնիսկ) յոյն փիլիսոփաները չէին ուզում դրանում համոզուած երեւիլ, այնուհանդերձ նրանք կաշկանդուեցին, որովհետեւ մեծարեցին իրենց դիցաբանութիւնը: Բայց թէեւ յոյներից նրանք, որոնք խոստացել են խօսել Աստուծոյ մասին, շատ շատ (են), (սակայն) նրանք երբեք չճանաչեցին Աստծուն, նոյնիսկ (նրա մասին) խօսած լինելով: Նրանցից մէկը՝ բոլորի կողմից ամենից իմաստունը հռչակուած, համարւում է Պղատոնը, որ փորձել է խօսել Աստուծոյ մասին, հոգու եւ արարչութեան մասին: Մեզ հարկաւոր է հենց նրա հետ մրցել փաստարկումներով, նա, որ յոյների մօտ համարւում է իբրեւ ամենից աստուածապաշտը եւ ամենից ճշմարիտը: Երբ երեւի՝ որ նա անգիտացել է Աստծուն եւ նրա արարչութիւնը, (ապա) անհրաժեշտ կը լինի ընդունել, որ միւսները հարկադրուած են յերիւրելու պառաւական պատմութիւններ եւ հրէշներ, եւ այդպիսով ցոյց տուած կը լինենք, թէ ո՛վ է ճշմարիտ Աստուածը եւ (ի՛նչ է) նրա արարչութիւնը: Պղատոնը փորձեց բոլորին ասել, թէ Աստուած անճառ է, միշտ է եւ լինելութիւն չունի: Իր դիտեցած աւանդութիւնները նա փորձեց պատմել առանց տեղեկանալու: Ընդունելով Աստուած որոնողի ընտրութիւնը՝ ես չեմ գովում ամբարտաւանութիւնը եւ ինքնահաւանութիւնը նրա, ով չուզեց տեղեկանալ: Ինքը, Եգիպտոսում ճշմարտութիւնից հարկադրուած, չընորհիւ այն քահանայի, որից տեղեկացել էր դրան, վերադարձաւ իւրայինների մօտ եւ յունարէն լեզուով այն յայտարարեց, որպէս թէ իրենք լինէր, առանց որոնելու, թէ եգիպտացի քահանան ումի՛ց էր իմացել, եւ այն յայտնեց Սողոն փիլիսոփային, ինչպէս յիշատակուած է «Տիմէ»-ում (հմտ. Timée, 21e-28c). եւ (քահանան) ասելուց յետոյ, թէ ո՛րքան աւանդութիւններ էր վերցրել նրանցից, որոնք Աստուծոյ մասին ստացել էին առաջին տեղեկութիւնները, նա իբրեւ սքանչելիքներ պատմեց Սողոնին առաջին ջրհեղեղը եւ Սողոմի մասնակի հրկիզումը. Սողոնը, զարմացած, դրանք իբրեւ բացառիկ սքանչելիքներ յայտարարեց ամբողջ Յունաստանում, ըստ քահանայի եւ Պղատոնի վարկածի: Եթէ Պղատոնը կամեցած լինէր նրան (վկա-

յակոչել) ոչ թէ իբրեւ չնչին փառասիրութեամբ, այլ աստուածապաշտութեամբ...»:

Վերջապէս էջերուկը նշում է հետեւեալը. «Երբ կարդում ենք Հիպոդիտոսի ամբողջ հատուածը եւ այն համեմատում Եգնիկի մտքի ընդհանուր ընթացքի հետ, նկատուում են կարեւոր տարբերութիւններ» (էջ 443): Մատնանշելով դրանցից մի քանիսը՝ եզրակացնում է, թէ շատ հաւանական է, որ Եգնիկը ձեռագրում եղած մէկ եջից աւելին չի յատկացրել Պղատոնին. նրան հերքելը ոչ թէ Եգնիկի, այլ Հիպոդիտոսի մտադրութիւնն է եղել: Ուստի հազիւ թէ ճիշտ լինի Հ. Աճառեանի վարկածն այս մասին:

Աւելացնենք՝ որ աղբիւրի եւ հայերէն շարադրանքի բաղդատութիւնը մի անգամ եւս ցոյց է տալիս, թէ Եգնիկը ինչպիսի՜ ազատութեամբ է օգտուել իր կարդացած հայրաբանական գրականութիւնից. Հ. Յ. Տաշեանը շատ էր սահմանափակել մեր հանճարեղ հեղինակի այս ազատութիւնը, յայտարարելով, թէ նա ընդօրինակելով իր գրքի մէջ է մտցրել Մեթոդիոսի յայտնի աշխատանքը: Եգնիկը կարողացել է պահել իր ինքնուրոյն դրոշմը, եւ դա նրա փառքն է:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ